

Ճ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ.

(Տես յ'էջ 160)

638. Եղերդ. Եղերդակ. Եղերդակն. Հիւղերդակ.

Այսպէս զանազան կերպով գրուած կամ այլապէս է այս անունս. իսկ բոյսն այլ զանազան անուններ ունի մեր լեզուաւ. ինչպէս, Դասնիձ, զոր յիշեցինք (Թիւ 554), Եղեգ, Ճարձատուկ. Թերեւս քիչ մի զանազանութիւն ունենան մէկմէկէ, ինչպէս նաեւ Կայծառն և Հնդիպէ (տես զայս), զոր նորերս զանազանեն, այլ մեր Բժշկարանք երբեմն խառն գրեն, իրրեւ նոյն ազգ բոյս, մէկն ընտանի (Եղերդն), միւսն Վայրի (Հնդիպէն), որով անուամբ կոչի և Լ. Eadivia. իսկ Եղերդն՝ Cichorium. Փ. Chicorée. Լսենք մեր Ամասիացւոյն. « Հնդուպէ, որ » է Վայրի Հազարն, և Հ. Եղերդակ ասեն, և Անտիդեա այլ ասէ, և Պ. Քասնի » կ'ասէ. և լաւն է այն որ ածուոց լինի » : Դարձեալ առանձին կամ կրկին գրելով կ'ըսէ. « Կապուտ ծաղիկ » ունի. աղէկն ի պաղշան լինի. . . . Ասցել է Սահակ » բժիշկն, թէ ինքն ազգ-մն է ի Քասնուն» : Ուրիշ Բժշկարան մի գրէ. « Քասնին որ է Եղերդականն, որ Ա. » լապն Հնդուպէ ասէ. մէկն տանոյ է և մէկն վայրի. » և այն որ վայրի է՝ Տարչադոշի ասեն » : Դարձեալ, « Աւէ Պատէհին. թէ Հռ. Սաղմիա կ'ասեն (Salvia), » և Մեհուհիթոն ? և իր տերեւն տափակ է. և այն որ » ածուոց է՝ Անտիդեա (Eadivia) կ'ասեն. և ինքն եր. » կու ցեղ է. մէկ ցեղին տերեւն տափակ է որպէս Հռ. » զար, և ցեղ մի լայ կայ՝ որ տերեւն բարակ է և համն » լեղի է. և լաւն այն է որ ածուոց լինի, քաղցր լինի. » և լաւն այն է որ Շաւցի, شاذو լինի, այնոր Անդու. » նիա. (Անդուպիա لادوپيا) ասեն. . . . ինքն ի յաղէկ » Քասնինեուն է. . . Մասնհն (!) ասէ, թէ ասոր բնու. » Թիւնն Քասնուն և Հազարուն մէջն է. և Տապարին (2) » ասէ, թէ քան զՀազարն նորբ է, և քիչ կիրակրէ զանձն. և թէ զտերեւն » ծեծես և ուռեցին վերայ դնես՝ որ կակուղ է, բանայ և հովցընէ, և իր ջուրն. . » և տալն և հունտն ուժով է. և կեղեւն ի բան կու մտնէ » : Բժշկութեան մէջ շատ տեսակ օգուտներն այլ յիշէ Եղերդակի պէսպէս մասամբք՝ առանձինն կամ ուրիշ գեղոց հետ զուգած. — Ուրիշ անուն կամ տեսակ մի յիշէ մեր հեղինակն. « Եւ Քասնի վայրի կայ՝ որ այնոր Խանդարնի կ'անուն » : (տես զայս) : Աւելի հե. տալքըական և արտաւոց անուններ յիշէ ուրիշ Բժշկարան մի. « Հնտիպա-Եղերդ » դակն. Հնտիպա չորս ազգ է. մէկն Չրդիւն է. մէկին Զէթունցիք Ղազտամ. » պոռա կ'ասեն. մէկն Քասնին է, մէկն Մառուշն է » (Հազարն) :



Եղերդ.

1. Առն Սաւն Մասն Վրկանցի (Եւ Ջօանի) անուանեալ քրիստոնեայ բժիշկ մի է Ժ դարու երկրորդ կէտան, որոյ այսպիսրոտ է հռչակաւորն Էպու Սինա :

2. Անեանիք է ինչ իբր բժիշկ. իբր պատմիչ նանքածանիք է այս անուամբ (Տապար. ստանցի) հեղինակն Թ դարու :

Ս. Գիրս, երբ Եգիպտոսէն ելնող Հրէից պատուիրէր Մովսէս՝ ուսեւ Բաղարը Եղէզով (Եւք թԲ, 8) . մեր հին Բժշկարանն այլ պատուիրէ հիւանդին, « Հետ » հացին Հազար և Հնդպէ թող ուտէ » . և ուրիշ տեղ մ'այլ իմացնէ՝ թէ « Ե- » « դէգ՝ որ է Հնտիպէ, կայ յինքն լեղութիւն ու փոյթութիւն (փոթութ) . և լե- » « զութիւնն է շատ , և լեղութիւնն ամառն լինի . և երբ լեղութիւնն շատնայ՝ » « հովութիւնն պակսէ . այլ ձմեռն և դարուն հովութիւնն է շատ . և է ինքն հով » « յառաջին տարաճան, և շոր ի մէջն (միլակ) , և երբ շորնայ՝ պակաս տաքութիւն » « լինի յինք . զլերդի ճանպահն բանայ և զստամոքոն սրէ : (Կ'աւեցընէ մեր » « բժիշկն) իմաստունքն զինք հով ասացին , բայց փորձեցաք՝ որ ի ներս չորու- » « թիւն կայ » : — Վաստակոց զիրքն Եղերդը ուրիշ անուան մի հետ զուգէ . Կանկաւր անուշ և անփուշ ընելու համար՝ հունտը այլեւայլ բուսոց ջրոյ մէջ թրկոց դնել խրատէ , որոց մէկն այլ՝ « կամ ի Եղերդոյն (Լուրը) , այսինքն ի » « խիլն » : Բայց այս Եղերդս չէ Եղերդական , այլ հարկ է թէ Եղերդու ծառն ըլլայ . ինչպէս տեսնենք իր կարգին : Լսենք հիմայ մեր երգիչ Սալաճորեցոյն .

« Սինձ, Երիցուկն, ու Եղերդակն (!) կու սպասեն Արեւորդուն .

Նման Բարսի ծառոյ, որոյ յարեւ դառնալն և պաշտուիլն յԱրեւորդոց՝ յիշեցինք (Թիւ 323) :

636. Եղրդակ վայրի .

Վերը ըստածէն կ'իմացուի ինչ ըլլալն . բայց որովհետեւ Բժշկարանք որոշելով կ'ըսեն « Եղերդակն վայրի՝ որ է Խանգարիտն » կամ Խանգարեկ , յիշենք այս անուան տակ այլ :

637. Եղրդան տակ .

Այս այլ առանձին յիշուի . Ասար պարգապէս վայրի Ճարձատունն է , կ'ըսէ . որով կ'ըլլայ անմիջապէս ասկէ վերի գրուածն . ուրիշ մի զուգէ ընդ Տարչաղուիս կամ Տարչկուի , որ նոյնպէս Եղրդակ կամ մէկ տեսակն է , և յիշենք զայն այլ ի կարգին :

638. Եղրդական ծաղիկ .

Այսպէս յիշուած է ազաւաղ գրուած Բժշկարանի մի մէջ , որ Թերեւս ըլլայ

639. Եղրդոյ ծաղիկ .

Ըստ հին Բժշկարանի այսպէս կոչուի և տարբեր նիւթ մի , այսինքն Ծարրի քար , որոյ հետ յիշէ և յիշաճաքար , կամ նոյն կամ նման , և այրելով դեղ պատրաստել խրատէ : Նոյն Բժշկարան յիշէ և

640. Եղրդոյ պտուղ .

Եւ ասոր զուգանիշ դնէ « Դաքնի՝ կոկոն » . եթէ չէ չփոթուած ընդ Եղրեղ-ւոյ . որ Դաքնի նշանակէ . տես Թիւ 631 , կամ Թերեւս ըլլայ

1. Սրտանձառան և Կոստանեան իրենց օրինակին մէջ Եղրեւ կամ Եղրեւ գրեւ կամ գահր են , բայց ոչ ուղիղ :

641. Եղեւան.

Եթէ չէ Եղեւան. Հին Բժշկարանն կ'ըսէ. « Գիտացիր՝ որ Եղեւանին ջուրն » և Ուռոյն, Թրմիզին (և քանի մ'այլոց), այս ամենս մէկ զօրութիւն և գործ » ունի, (որ է) զհիմի հանել յանձնէ, զտափակն ու դրոլորն »:

642. Եղեւին (!).

Այս ծանօթ անունս երկու տարբեր և աննման բոյս և բերք նշանակէ, մէկը յիշեցինք ի Գնտածադիկն (Թիւ 501), որ շատ հեղ ի Բժշկարանս կոչուի Շէհ Թուրքի, ինչպէս Հին Բժշկարանն այլ գրէ. « Եղեւին՝ որ կոչի Թուրքի Եղեւին » կամ Շէհ Թուրքի, կամ Հաշիշ, յԱթթիմոն նման է »: Այլու. կու նմանցընէ Օլընդրի, և համն լեղի (կ'ըսէ). աղէկն ի Թուրքաց գայ. բայց ուրիշ Բժշկարան լաւ մեղնէ հեռու չի գներ, Շէհ անունս տակ նորէն գրելով. « Շէհ, որ » է Խորասանին. Թ. Խաշրան ասէ. լաւն այն է որ գեղին լինի, որ ի Հայոց » գայ. ասեր են Թէ, Պ. Տարսիման ասէ. և այնոր Տարսիմայի Թուրքի ասեն, և » Շէհի ձապալի ֆիլիոն. համն լեղի է. յոր տեղ որ օծեն՝ մաղ կու բուսցընէ... » և ի յայլ գործ որ մտէ՝ Շէհն է, որ ի Հայաստանեայց երկրէն գայ »: Ուրիշ մ'այլ գրէ. « Եղեւին՝ Շէհ. ինքն նման է Օլընդրի, բայց չէ Օլինտոս. զի լեղի է. » և ապա հունտն է Խորասանն. ի Հայոց գայ »: Պէլլոթար Շիհ կ'անուանէ և կ'աճի կ'ըսէ ի լերինս Տորոսի, ի Կապադովկիա, որք սահմանակիցք են Հայոց և ի Բուշիո Եգիպտոսի. — Մարեկի լուծմանց գիրքն քիչ մ'եւել բացատրէ (ի Բանն ԿԱ) Թերեւս տուր վարդապետին ծառ կոչածը. « Տատանին տաղնապա » տերեւը տնկոց Եղեւին ծառոց՝ շարժեալք ի հողմաց ուժգին բաղխելոց. հոսեալք » ի խոնարհ, » և Շէհ բոյսին հետ շիթեղով. « Եղեւին՝ ցալս է ծանծաղար » մատ, այսինքն սաղ ? է տակն. Եղեւին ասի, յայգիսն բունի. աւելի կապեն » զինքն » (աւել, աւելու գործի): Օլընդրի նմանութեան համար ի բուսաբա » նից յատկապէս կոչի *Artemisia Absinthium*, մէկ տեսակն այլ *Ar. Maritima*.

643. Եղեւին (ծառ).

Երկրորդ կամ զլիսուոր նշանակութեամբ՝ վայրենի բարձր և ճիւղերն իրարմէ հեռու ծառ մի է Եղեւինն, հասարակաց ծանօթ, և շատ հեղ յիշուած ի Ս. Գրիս. և կարծեմ՝ առաջին անգամ սրտանմիկ և ողբերգական յիշատակաւ տառապեալ մօր մի, (Ագարայ), և ծարաւատանջ կիսամեռ որդւոյն՝ (Իսմայելի). որոյ մահը շտե » նելու համար՝ « Ընկէց զմանուկն ի ներքոյ միոյ Եղեւին ծառոյ, և երթեալ նըս » տաւ յանդիման նորա ի բացեայ, իրեւ վտաւանաւ. զի սուէր, Թէ ոչ տեսից » զմահ որդւոյ իմոյ. և (սակայն) նստէր յանդիման նորա »: ուրիշ կերպ այլ չէր կրնար ընել մայր մի. որոյ՝ և զաւկին՝ զԹալով Աստուած բղիսեցուց կենարար ջուրը: Բայց ծառիս նկատմամբ հարկ է նա և յիշել, որ Ս. Գրոց բնագրին (Ե. րրայերէն) յորմէ և լատին թարգմանութեան մէջ՝ նշանակուած չէ ծառին տե » սակն, մեր Թարգմանիչք ըստ Եօթանասնից՝ Եղեւին ճանչցեր են: Ոսկերեբանի անուամբ Մենդոց Գրոց մեկնութիւն մ'ունիմք, ուր Սաաի կոչուի ծառն, անշուշտ Սօսի իմանալով: Հին գարեբուս Եղեւին՝ փայտն՝ որ յատկապէս Եղեւնափայտ կոչուի՝ ապարանից և տաճարաց շինուածքի լաւագոյն և ազնուագոյն նիւթ համա » բուէր, ինչպէս նոյն Ս. Գրիք վկայեն, Թէ՛ Սողոմոնի և Թէ՛ այլոց համար. նոյն

1- Այս կակուռ ձայնով Յ. Έλάτι կոչուի տեսակ մի նման ծառ. (Լ. *Abies Pinus*), ի Սլաւոն լեզուս՝ էլէ կամ Ել, իւլանա. *Ailm*.

իսկ Նոյի տապանի փայտն՝ ըստ ոմանց Եղեւին էր: — Յ. և Լ. նոյն անուամբ կոչեն այս ծառս, 'Abies, Փ. Sapin. — Յիշելի է որ շատ վայրի կամ անտառային ծառեր՝ իրարու նմանութիւն ունենալով՝ անուամբ այլ շփոթին, ինչպէս այս Եղեւին՝ Շոճի կամ Սոնոպրի ծառոյ հետ, որոց նմանին և Մայրիք: Եղեւնոյ մէկ յատկութիւնն այլ է իր խէժն, բաւական քան զայլոց, որ գործածուի ի դեղս, և կ'ըսուի առ մեզ Եղեւնախիժ. (Փ. Térébenth. Թ. Թիթիսմենրին). այս խժաքեր Եղեւինն Փ. Sapin Pectinē կոչուի, իր տերեւոց տարածուած և ցրուած ըլլալուն համար. կոնսաձեւ պտուղն այլ աւելի թեփոտ է և նեղկուկ: — Այլեւայլ տեսակք են Եղեւնեաց. մեր երկրին վրայ դժար է գտնել և որոյել. թէ կլիմային համար թէ ծառոց պակասութեան: Մեր բառագրոց մէկն զոյգ կամ նման համարելով նշանակէ « Եղեւնափայտ. Զրդի. Երաքանի Սիլվի. Կանի »: Բուն Եղեւնեաց տեսակներէն՝ Նորդմանեան կոչուածն՝ Ab. Nordmaniana. յիշուած է ի Մանախ, ի Քոշ տաղ. յատուկ տեսակ մ'այլ Ելիլիեան կոչուի, հօն ի Պրիտ Լ, և Գասան օղլու:

644. Եղէգն.

Մանթի և յատկագոյն քոյս ճահիճներու և ծանծաղ ջրերու. իր բարակութեամբ և երկայնութեամբ, նոյնպէս և տերեւներուն, ցամքած առնն դեղին գունովն, փռն. ջաձեւ ծաղկամբն, և պէսպէս գործեաց՝ մանաւանդ փշողական երաժշտութեան փող և սրինգ ընծայելով, պարզագոյն, հնագոյն և ընտանեգոյն դործին, նշանակ Հովուական ըսուած բանաստեղծութեան. իսկ իր տկար կազմութեամբ հովերէն կոծուելով ծեծուելով ծռելով՝ և սակայն առանց կտորուելու նորէն կանգնուելովն՝ բարոյական օրինակներ ընծայած է. որոց զիսաւոր կըրնամք յիշել մեր Փրկչին ըսածը՝ վասն Յովհաննու Մկրտչի. « Չինշ ելէք տեսանել յոնապառ » տին, Եղէգն շարժուն ի հողմոյ »: — Այս յիշելով անկարելի է որ քրիստոնեայ մի շիլիէ և չհարցընէ Քրիստոսի, կամ ինքն իրեն, Ի՞նչ է այդ Ելէգգ այլ քու ձեռքումդ. — յարմար գաւազան փշապսակ Թազաւորի...

Ըստ զանազանութեան ջրայատակին և կլիմայից՝ հարկ է որ շատ տեսակ Եղէգը ըլլան. մեր հեղինակն ու վկայէ, Ար. Ղասապ բառին ներքեւ, قصب. « ինքն » շատ ազգ է. ի Սիս է աղէկն և դեղինն. բայց (ամենէն) աղէկն ի Շամ » լինի »: Դարձեալ գրէ երկու տեսակ. « Մէկն Ֆարսի է և մէկն Նապոտի է. » լաւն տակն է »: շատ տեսակ հիւանդութեանց օգտակար դեղ ըլլալն յիշէ, բայց և զգուշացընէ, « Թէ ծաղիկն մարդուն յականջն մանէ՝ խուլ առնէ զմարդն »: Հասարակ Եղէգն կոչուի Լ. Canna կամ Arundo. Փ. Roseau. — Տես և Բալախ:

Պէտպէս Եղեգաց մէջ ամենէն նշանաւոր և իբր Թազաւոր կըրնանք կոչել, թէ և ոչ մեր երկրի քոյսերէն է և ոչ մեր լեզուով հին յատուկ անուն ունի,

646. Շաքարի Եղէգն.

Լ. Saccharum officinalis, Փ. Canne à Sucre. « Ղասապ ըլլ-Սուքար, որ է այն Ե. » դէգն, ըստ Ամիրտ. որ Շաքար կու բուսնի, եթէ ծամես զայն Եղէգն ի կե. » բակրին վերայ և զլուրն ի կուլ տաս, օգտէ կրծոց և թոքին խոշորութեանն, և զխոչալին կակղացընէ, և զգէճութիւնն տանի. և օգտէ հազին, և զըս. » տամրին զրոցն ալ տանի »: Հին Բժշկիր. մեր ի պտղոց կարգի՝ բայց ամենէն վերջ յիշէ զՇաքար. « Տաք է յ'Ա տրճ. և քամի յ'Ա տրճ. յառաջն գիճային է, » կակղցընէ զփոր և ախորժ ի ստամոք, զի սրբական է, եւս՝ որ սափրայոտ » չինի, իսկ սափրայոտի զեն է, զի սափրայոտ՝ զթթու ախորժէ, և այս քաղցր է, բայց Տապարգին (տեսակ Շաքարն) կակղցընէ զընուութիւն »:

Աւելի մերձաւոր մեզ և հայանուն է

646. Շաւառ Եղէզն կամ Շաւառն.

Ըստ Ար. Ղասապ Զարիրա **عزق** Լ. Calamus կամ Calamus aromaticus. « Լաւն այն է որ գոյնն եաղութին գունովն լինի, ... օգտէ բթին հո-
 » տին, և աշիցն ճէ կու տայ, և սրտին ցաւուն օգտէ. . . Ասէ Պտ. Թէ բարակ
 » Եղէզն է որպէս գրիշ, և այլ բարակ. և ինքն երկու ցեղ է. մէկ ցեղն ի Շուշ-
 » մայի փայտն կու նմանի, և այն ցեղն կարճկուկ է, և յերկայնութիւնն մէկ
 » Թիղ է և այլ քիշ մի յերկան, և մէկ ցեղն այլ կոկ է և յերկայնութիւնն մէկ
 » կանգուն, և համն սուր և լիզի, և գոյնն մթնագոյն, և Թէ կոտորես՝ մէջն
 » սարդոստէ կու նմանի. կանգուն ցեղս ի Քալաքթութիւնէն (Կալիգուգ Զընդ-
 » կաց) կու գայ, և այնոր Պարքասիրա ասեն. ուղէկն այն ցեղն է որ ի բուսն
 » Շուշմայի ծառ կու նմանի, և իր ճղերն և հունտն ի զագաթն լինի՝ որպէս
 » Սիսեռ՝ որ ի յամանի մէջն լինի, և այս ցեղս սրութիւն և լիզութիւն քիշ ունի,
 » և ի Հնդկաց կու գայ. բայց չէ աղէկ... Եւ Պ. այսոր Նայլին հաւանտի ասեն ու
 Շաւառն նշանաւոր անուն մ'է, որոյ ստուգարանութիւնն կամ ծագումն անծա-
 նօթ. բայց Եղէզ նշանակէն յայտ է այնով այլ՝ որ նշանակէ եւս Նրաժշտական
 փող. դարձեալ, Շաւառնէ՝ նշանակէ Տաղաւար. գուցէ Եղէզներով շինուած բնա-
 կարան: Պետրոս առաքելոյն առ Քրիստոս ըսածն զմայլմամբ ի Թաբոր լերին՝ յիշե-
 լով՝ վաճական վարդապետ, կ'ըսէ. « Շաւառնէ տաղաւար շատ էր արարեալ »
 Պետրոս: — Իսկ իր անուշահոտութիւնն կըրնայ հաւաստել՝ Թէ ըլլայ նոյն իսկ

647. Եղէզնախունկ կամ Խունկեղէզն.

Որ յիշուի ի Ս. Գիրս. ինչպէս (Ելից. Լ. 23) ուր և լատինն Calamus գրէ. Գա-
 լիենոսի բառից մէջ խանգարած գրուի « Եղէզնախունկ » Կալաւաւս աղտիկով
 կամ աղտիկոս, որ պիտի ըլլար Կալաւաւս աղտաւորով (Calamus Aromaticus).

648. Եղեզան Նրադիկ.

Մ/ս. Գոշ (ԼԵ) Եղրդակի և Բարտոյ նման տրեւահայեաց բուսոց կարգին դնէ
 զայս, առանց աւելի ծանօթութիւն մի տալու, զոր ուրիշ տեղ այլ չեմք գտած.
 « Նախատեսցաւ Եղեզան ծաղիկ և նմանը նորա՝ պաշտօնեայ լինել արեգական. և
 » նորա ձգեալ զձեռն յարեւն՝ երդուաւ արեգական, Թէ ոչ եմ »:

649. Եղիգի.

Եղրդակ նշանակող Եղեզն է. տես զայս:

650. Եղին կամ Եղինն.

Թէ ոչ անպիտան՝ այլ անարգ բուսոց կարգին է, ճամբաներու մէջ ոտից կոխան
 բուսնելով, բայց հունտերն զեղի գործածուին. Բժշկարան մի գրէ. « Եղինն՝ Ան-
 » ճիւրէ (Ար. **عزق**), ինքն երկու ազգ է. մէկին ծաղիկն երկայն, մէկի բոլոր. ա-
 » ղէկն ի Շամ լինի ու Սմիրտ. յիշէ այլեւայլ օտար անունները, որոցմէ « և Պար-
 » սիկն Թոռիալի Անճիւրա ասէ, որ է Եղիձին հռչակն. ինքն երկու ցեղ կու լինի. և
 » լաւն այն է որ կանանչ լինի և հունդ ունենայ. . . Թէ զիւր հունդն ուն ձուլածով
 » ծեծես և դնես ի վերայ ակռային՝ հանէ. և Թէ գտերեւն հիփես և դնես ի վերայ
 » ուռէցին՝ օգտէ՝ որ ի ականթոթոքն լինայ », եւայլն, և այլ շատ տեսակ ցաւոց և

ուռեցից՝ դեղ նշանակի։ Հունտի տեղ՝ Եղիձի Սերմն այլ գրուի։ — Մեկնելով՝ Նա-
րեկացւոյ այս խօսքս (Բան 24), « Տնկեցի յոգիս խոտո խայթողականս ինքնա-
» Թոյնս ընդարմացուցիս », մեկնին կ'ըսէ։ « Ինքնաթեմ ? (ինքնաթոյն) Եղիձն
» է ու — Լ. Urtica, ֆ. Ortie.

Աղեւայլ տեսակ Եղիձի յիշուին առ մեզ այլ . հին Բժշկարանն կ'ըսէ , « Եղ-
» ճին երկու տարազք են , (այսց չի բացատրեր , այլ օգուտներն յիշէ) . զտերեւն
» աղով ծեծէ և ի վերայ դիր , այտնուլ շտայ , և յականջն ի շատ տարեց դան
» կենայ և կամ յայլ մարմին , կամ սունկն կամ աղտեղի վէր , զկեղեւն ծեծէ ,
» ի վերայ դիր : Թէ ընդ մոմու ձէթ խառնես ու դնես ի վերայ փայծղան , զխըս-
» տութիւնն լուծանէ . — և զտերեւն ծեծէ և ի քիթ դիր , զարոյնն կտրէ , և
» Թէ չոր աղաս և մեղրով շաղես ու տաս , օգնէ Թառանի , խաշիւղ , կողցվի ,
» Թղթցվի , որ ի կուրծքն մաղաս կայ , զփորն լուծէ և փքանալ շտայ » — Բու-
սարանք քանի մի տեսակ յիշեն , և մէկը U. Pilulifera (Կլուլարեր) ի Միջագետս
և ի Հր . Կովկաս :

657. Եղին ականջ .

Ամիրտովաթ գրէ . « Եւանմայ քաւի որ Թ . Աղձա օր ասէ Զղախոտին , և
» Եղին ականջ ասեն խոտ մի կայ , այնոր ի մէջն կու բուսնի , և ի անոնց
» մէն փոքր լինի , և ի տերեւին ի միջէն որձայ ելնէ , մէկ Թիզ երկայնութիւն
» կու լինի , և Թէ հասակեկ ծեծեն և ցանեն ի վերայ խոցերուն՝ բուսցընէ :
» Եւ ի Երբազ՝ Մոռողտարու ասեն » : — Պէյթար՝ ճերմակ բոյս մ'է կ'ըսէ այս ,
մազոտ տերեւներով , կէս մի Զղախոտի կէս մի Դանեղուի նման . ըստ Թարգ-
մանին՝ է Լ. Hieracium Pilosella, ֆ. Piloselle. նշանակուած է սա ի Հր . Կով-
կաս և ի Թալիշ :

662. Եղջիւր . Եղջիւրի .

Ըստ նմանութեան ձեւոյն և ըստ կարծրութեան՝ յարմարած անուն , տաք կլի .
մայի պտղոյ և ծառոյ , որ կերպով մի անմոռանայի ծանօթացեալ է Անառակ որ-
դւոյ առական (յաւետարանին Ղուկայ) . Թ. Κέρας (եղջիւր) Լ. Ceratonia, իսկ
ֆ. Caroubier՝ յասորի կամ յարար բառէ , ۞ , յորմէ և հայերէն ալ ն .
գիրն աւելցընելով , Խառնուպ . բուն Ար . Եւանպոք , ۞ օրով բացատրէ Ա-
միրտովաթ . « Եւանպոք , որ է Եղջիւրն , և Թ . Կէլի պոյնուզի ասէ . և ինքն
» երկու ցեղ կու լինի . մէկ ցեղն զէտ փուշ է , և միւրզն զէտ Խնձոր , և ի մէջն
» կարմիր հատկեան ունի . զփորն կապէ . և մէկ այլ ցեղն ծառ կու լինի մեծ ,
» որպէս Խնձորի ծառ և տերեւնին Ծորի տերեւէն մանսր կու լինին . և միւրզն
» նման է Ալուհին (1) , և սեւակ լինի և խիստ քաղցր . և զկուտն՝ սառաֆնին
» ի գործ կու արկանեն սակի և արծաթ կշռելու համար . — Թէ զտակին կէ-
» դեն յակուան օծես , զցաւն տանի , և զակուան անվաւ շուտով հանէ : Ասէ
» Պտ . Թէ Եւանպոքն՝ Խառնուպի Նապոյին է . . Ի յանապատ և ի պարտէզն
» կու բուսնի . և իր պտուղն նման է գառին երիկամի , և գունն կարմիր՝ որ ի
» սեւութիւն քլտէ . և ի յԵղջիպտոս այսոր Հապ ուլ-քլիայ տանն . և իր հունտն
» նման է Եղջիւրի կլտին » : Տես և Խառնուպ :

